ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԻՄՆՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Իրանի Իսլամական Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ կողմեր,

նկատի ունենալով երկու պետությունների հետաքրքրությունը միմյանց մշակութային արժեքների, ավանդական մշակութային կապերի հետագա զարգացման եւ պահպանման գործում,

հաշվի առնելով 1994 թվականի նոյեմբերի 27-ին Թեհրանում ստորագրված "Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության Կառավարության միջեւ մշակույթի, գիտության, կրթության, սպորտի, զբոսաշրջության եւ զանգվածային լրատվության միջոցների բնագավառներում համագործակցության մասին" համաձայնագիրը,

համաձայնեցին հետեւյալի մասին,

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը պայմանավորվում են իրենց երկրներում հիմնել մյուս երկրի կրթական եւ մշակութային կենտրոն (այսուհետ՝ Կենտրոն):

ՀՈԴՎԱԾ 2

Կենտրոնի հիմնական գործունեությունն է կրթական եւ մշակութային աշխատանքների իրականացումը, այդ թվում՝ դպրոցի հիմնումը եւ այլ կրթական, մշակութային, գեղարվեստական եւ հրատարակչական աշխատանքների իրականացումը:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը, իրենց երկրների ազգային օրենսդրությանը համապատասխան, կօժանդակեն իրենց տարածքներում մյուս Կողմի Կենտրոնի հիմնմանը, ներառյալ դրա համար շենք եւ/կամ հողատարածքներ գնելու եւ դրանց ու Կենտրոնի նկատմամբ սեփականության իրավունքի համապատասխան վկայականներ ձեռք բերելու հարցը:

Յուրաքանչյուր Կողմ, իր տարածքում գործող օրենսդրության համաձայն, կձեռնարկի բոլոր համապատասխան միջոցները մյուս Կողմի Կենտրոնի բնականոն գործունեությունը ապահովելու համար:

ՀՈԴՎԱԾ 4

Կենտրոնը կգործի՝ համագործակցելով համապատասխան երկրի դիվանագիտական ներկայացուցչությունների հետ, որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն:

ՀՈԴՎԱԾ 5

Կենտրոնը պետք է իր գործունեությունն իրականացնի ընդունող Կողմի օրենսդրության համաձայն:

Կենտրոնը կարող է օժտվել իրավասուբյեկտությամբ եւ իրավունակությամբ՝ ընդունող Կողմի օրենսդրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ 6

Կենտրոն հիմնելու նպատակով.

1. Իրանի Իսլամական Հանրապետությունը կարող է 650.000 (վեց հարյուր հիսուն հազար) ԱՄՆ դոլարով գնել Երեւան քաղաքի Լվովյան փողոցի 8-րդ հասցեում գտնվող շենքը եւ հողատարածքը (ըստ կցվող հատակագծի):
2. Հայաստանի Հանրապետությունը կարող է Թեհրան քաղաքում գնել շենք եւ/կամ հողատարածք, որի կոնկրետ հասցեն կծանուցվի հայտագրով, եւ որի վաճառքի թույլտվությունը կհամաձայնեցվի Իրանի Իսլամական Հանրապետության իրավասու մարմինների հետ: Սույն կետում նշված հայտագիրը կկազմի սույն Փոխըմբռնման հուշագրի անբաժանելի մասը:
Կենտրոնների հիմնման նպատակով Կողմերի երկրներում գնված շենքերի եւ/կամ հողատարածքների առքուվաճառքի պայմանագրերը կկազմեն սույն Փոխըմբռնման հուշագրի անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 7

Յուրաքանչյուր Կողմ, համաձայն իր տարածքում գործող օրենսդրության, մյուս Կողմին կտրամադրի Կենտրոն հիմնելու եւ կահավորելու համար պահանջվող նյութերի տեղափոխման համար հարմարություններ եւ կապահովի դրա գործունեության իրականացումը՝ համաձայն սույն Փոխըմբռնման հուշագրի դրույթների:
Ընդունող Կողմի գործող օրենսդրության համաձայն՝ ընդունող Կողմը կձգտի ուղարկող Կողմին ազատել Կենտրոնի ժամանակավոր կամ մշտական կարիքները հոգալու եւ ընդունող պետությունում վաճառքի համար չնախատեսված ապրանքների ներմուծման համար սահմանված մաքսատուրքեր վճարելուց:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտնում դրա համար անհրաժեշտ՝ Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերն ավարտելու մասին դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցելու օրվանից եւ գործում է անորոշ ժամանակով:
Սույն Փոխըմբռնման հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերից որեւէ մեկի՝ այդպիսի մտադրության մասին մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով ծանուցելու օրվանից վեց ամիս հետո:

Սույն Փոխըմբռնման հուշագիրն կատարված է Թեհրան քաղաքում 2006 թվականի փետրվարի 1-ին, համապատասխանաբար՝ հիջրեթի 1384 թվականի բահմանի 10-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն եւ պարսկերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են:

Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտել 2006 թ. դեկտեմբերի 12-ից: